

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՍ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ  
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

«16» ապրիլ 2018թ. թիվ 10

**ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետը, 2-րդ մասի 2-րդ կետը, 3-րդ մասը, 5-րդ հոդվածի 2-րդ մասը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 02.03.2017թ. թիվ 5 որոշմամբ հաստատված Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի կազմման և գործունեության կարգի 10.3-րդ կետը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 02.03.2017թ. թիվ 9 որոշմամբ հաստատված Հատուցման գումարների վճարման կարգը, Ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի 16.04.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունից 13.04.2018թ. ստացված փաստաթղթերը և ԲՍՓՀ 27.02.2018թ. բժշկասոցիալական փորձաքննական թիվ 028571 որոշումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Երկրորդ խմբի հաշմանդամ, լեյտենանտ Խաչիկ Էդուարդի Գրիգորյանին վճարել Օրենքով սահմանված հատուցման գումարը՝ 53.000.000 ՀՀ դրամը, որից 5.000.000 ՀՀ դրամը միանվագ, իսկ մնացած գումարը՝ ամսական 200.000 ՀՀ դրամի չափով 20 տարվա ընթացքում,
2. Խաչիկ Էդուարդի Գրիգորյանին վճարել նաև Օրենքով սահմանված լրացուցիչ գումարը՝ 100.000 ՀՀ դրամը, մինչև Խաչիկ Էդուարդի Գրիգորյանի դուստր՝ Տաթևիկ Խաչիկի Գրիգորյանի (ծնված՝ 13.07.2003թ.) չափահաս դառնալը:
3. Սահմանել, որ Խաչիկ Էդուարդի Գրիգորյանին սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված ամսական վճարումների կատարումը սկսել 2018 թվականի մարտ ամսվանից և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3-օրյա ժամկետում վերջինիս փոխանցել 2018 թվականի մարտ և ապրիլ ամիսների համար սահմանված վճարները՝ 400.000 ՀՀ դրամը, ինչպես նաև 2018 թվականի մարտ և ապրիլ ամիսների համար Օրենքով սահմանված լրացուցիչ ամսական վճարները՝ 200.000 ՀՀ դրամը, ընդհանուր 600.000 ՀՀ դրամ գումարի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Հանձնաժողովի նախագահ՝**

**Վարուժան Ավետիքյան**